# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

## Ո Ւ Ղ Ե Ր Ձ

«04» սեպտեմբերի 2025 թվականի

## ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՒՂԵՐՁԸ ՓՐԿԱՐԱՐԻ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

ՆԳՆ փրկարար ծառայության հարգելի աշխատակիցներ

Շնորհավորում եմ ձեզ մասնագիտական տոնի առթիվ:

2008 թվականից ի վեր սեպտեմբերի 4-ը Հայաստանում նշվում է որպես Փրկարարի օր՝ ի պատիվ բոլոր այն անձանց, ովքեր իրենց հերոսական ու անձնվեր ծառայությամբ պահպանում են մեր երկրի բնակչության անվտանգությունը:

Առանձնահատուկ շնորհավորում եմ ՆԳՆ Ստեփանավանի հրշեջ-փրկարարական ջոկատի, ինչպես նաև Ստեփանավանի «Լոռէ» փրկարարական ջոկատի բոլոր ներկայացուցիչներին:

Ձեր ամենօրյա նվիրումը, անձնազոհությունն ու արիությունը հպարտության և երախտագիտության առիթ են յուրաքանչյուրիս համար:

Դուք կանգնած եք կյանքի ու անվտանգության առաջնագծում՝ պատրաստ ցանկացած պահի օգնության հասնելու, փրկելու ու պաշտպանելու:

Շնորհակալ ենք նվիրյալ աշխատանքի, պատասխանատվության բարձր զգացումի, զգոնության և մարդկային կյանքի նկատմամբ ունեցած ձեր հոգածության համար:

Ձեր գործը ոչ միայն մասնագիտություն է, այլ առաքելություն:

Թող միշտ անփորձանք լինեն ձեր հերթապահությունները, ուժ, կորով և առողջություն ձեզ ու ձեր ընտանիքներին:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**